

116. ԾԻ ԿՑՈՒՂՈՒՆՈՂԵՆ ՀԻՆԱՐԸ

Մին հարուստ խազային ունրան մին լավ ծիյավ քյինամ ա բազարը, հիշտեղ վրեր ա կյամ, ծիյին կապը պնց չի Թողում, մին տրեզա կապում չի, միշտ պրենդ փռնած ա պահում։ Մին ղոչճաղ ծի կյուղանող էլ տրա հետը կրտրած, բուս-բուս ա անում, վրեր ծին կյուղանա, կարում չի։ Էտ մարթը ծին նստում ա, քյինամ ունրանց տոն, ծի կյուղանողն էլ տրա հետան հրուաքաշ քյինամ ա։ Խազայինը տանում ա ծին կյուման կապում, պիցրանում տոն, քունավ հընցնում։ Մի կյուղանողն էլ կենում ա վրեր լափ մԹնում ա, կյումրեն տոռնը Թաքուն պնց ա անում, նի մենում ծին տռնա օնում, նստ տրեռնում, վրեր յիհարն ան ջիլանվն էլ քԹենա, եշում ա տրեսնում մին քյանդիր կլխբյեր պիցրրանում ա, մին կնգան սաս էլ Թա՝ ծիքյ տո, լափ ծիքյ տո, խեխտի։ Սա կրլոխ ա ինգյանամ, վրեր ըստրեզ մարթ ըն ըսպանում, ղանմանն տռնա ա օնում, Թխում քյանդիրը կտրում, պիցրանում տիյեր, տրեսնում մինը խրոխրոցրնում ա։ Քյանդիրը պկան նստ ա անում, նիրանն զիրավ տամ, տրան նստ պիրանամ, եշում, տրեսնում էտ ծիյատար խազայինը, կոխկեն էլ ունրան կնեգյն ան սիրականը։ Քշերը տրեզ կենում ա, էքյսը տրան հրրցրնում, Թա գյանդանամ ը՞ս քշերես հու վա իլալ պոկրտ քյանդիր քցողը, քեզ խեխտողը։ Տա Թա՝ հի՞նչ քյանդիր, հի՞նչ խեխտիլ, հի՞նչ պեն։

Մի կյուղանոցը թա՝ քոն իլանի ըս իլալ, վրեչ մին պեն գյիդացալ չըս, կենգյտ ան ուրան սիրականը ուզեցալ ըն քեզ ըսպանեն, ես էլ եկած ըմ իլալ, վրեր ծիտ կյուղանամ, յիրան պըտահալ ըմ, թխալ գյանդիրը կտրալ, քեզ ըզադալ։ Էտ խազայինը թա՝ դե վրեր ծիյիս հետե յըս եկալ, ծիս քեզ փեշքյնշ ըմ անում։ Տա թա՝ չէ, կենգյըտ ինձ տո, տանեմ մին ղրաղ տըեղ ըսպանեմ, քըզետե մին լավ կենգյ քթենամ, պիրիմ։

Տա էտ խազայինին կենգյը յոր ա օնում, տանում մին ծիրանմ ըսպանում, գյինամ օրիշ տըեղա մին լավ, ըրուռեն կենգյ պիրանմ տրա հետե, ուրանք ըխպըրանում ըն, միշտ գյինամ-կյամ։